# ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ Առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, Տուբերկուլյոզի և Մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի միջև 2009թ. օգոստոսի 14-ին կնքվել է պայմանագիր «Դեղորայքակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» դրամաշնորհային ծրագրի վերաբերյալ, որի ռազմավարությունն է ապահովել դեղակայուն տուբերկուլոզի ախտորոշման և բուժման համընդհանուր մատչելիությունը Հայաստանի Հանրապետության բնակչության համար: Նշված ռազմավարության իրականացման նպատակով ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, Տուբերկուլյոզի և Մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամը տրամադրել է դրամաշնորհ, վերջինիս կողմից նախօրոք հաստատված 4 նպատակներով և յուրաքանչյուր նպատակի համար հաստատված ծախսերի և գործողությունների ցանկով:

Ծրագրով նախատեսված գործառույթների իրականացման համար ընդհանուր բյուջեն կազմում է 1 745 311 (մեկ միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար երեք հարյուր տասնըմեկ) ԵՎՐՈ՝ որից 2010 թվականին նախատեսվում է փոխանցել ՀՀ Առողջապահության նախարարության 900013104048 արտաբյուջետային հաշվին 1 148 925 (մեկ միլիոն հարյուր քառասունութ հազար ինը հարյուր քսանհինգ) ԵՎՐՈ: Դրամաշնորհային միջոցների փոխարկումը ազգային արժույթի իրականացվելու է «2010 թվականի Պետական Բյուջեի մասին» ՀՀ օրենքով 2010 թվականի համար հաստատված փոխարժեքային կուրսով՝ 1 ԵՎՐՈ-ն=570.73 ՀՀ դրամ: Այսպիսով, ակնկալվող մուտքը դրամային արտահայտությամբ կկազմի 1 148 925*570,73=655 725 965,25 (վեց հարյուր հիսունհինգ միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար ինը հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ:

«Դեղորայքակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» դրամաշնորհային ծրագրի համար բացված 900013104048 արտաբյուջետային հաշվի մնացորդը 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 193 596 615,9 (մեկ հարյուր իննսուներեք միլիոն հինգ հարյուր իննսունվեց հազար վեց հարյուր տասնըհինգ) ՀՀ դրամ:

Այսպիսով 2010 թվականի ընդամենը ակնկալվող դրամական միջոցները կկազմեն՝

193 596 615,9+655 725 965=849 322 580 (ութ հարյուր քառասունինը միլիոն երեք հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ:

2010 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում նախատեսվում է կատարել հետևյալ ծախսերը ըստ հոդվածների՝

*1. 411100 հոդված Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ՝ 46 529.6 հազ. դրամ:*

Գլոբալ Հիմնադրամի ծրագրերը համակարգող աշխատանքային խմբի (ԾՀԽ) աշխատողների աշխատավարձերի համար նախատեսվում է 46 529.6 հազ. դրամ:

Հաշվարկը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 ՀՀ Դրամ

| N | Հաստիքներ | Չափի միավոր | Քանակ | Միավորի գին դրամ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | ՏԲ Կոորդինատոր | ամիս | 9 | 519091 | 4671819 |
| 2 | Կոորդինատոր | ամիս | 12 | 702108 | 8425296 |
| 3 | Մոնիթորինգի մասնագետ | ամիս | 12 | 540720 | 6488640 |
| 4 | Գնումների մասնագետ | ամիս | 12 | 540720 | 6488640 |
| 5 | Ֆինանսիստ | ամիս | 10 | 540720 | 5407200 |
| 6 | Ֆինանսական ղեկավար | ամիս | 12 | 750000 | 9000000 |
| 7 | Թարգմանիչ | ամիս | 11 | 288000 | 3168000 |
| 8 | 3 Օժանդակ աշխատակիցներ /վարորդներ/ | ամիս | 12 | 240000 | 2880000 |
| | Ընդամենը | | | | 46529595 |

*2. 4131000 հոդված Վճարներ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին՝ 3 850.5 հազ. դրամ:*

Գլոբալ Հիմնադրամի ծրագրերը համակարգող աշխատանքային խմբի (ԾՀԽ) աշխատողների աշխատավարձերի հիման վրա հաշվարկված սոց վճարի համար նախատեսվում է 3 850.5 հազ դրամ:

Հաշվարկը բերված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2 ՀՀ Դրամ

| N | Հաստիքներ | Չափի միավոր | Քանակ | Միավորի գին դրամ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | ՏԲ Կոորդինատոր սոց վճար | ամիս | 9 | 39954 | 359586 |
| 2 | Կոորդինատոր սոց վճար | ամիս | 12 | 49105 | 589260 |
| 3 | Մոնիթորինգի մասնագետ սոց վճար | ամիս | 12 | 41036 | 492432 |
| 4 | Գնումների մասնագետ սոց վճար | ամիս | 12 | 41036 | 492432 |
| 5 | Ֆինանսիստ սոց վճար | ամիս | 10 | 41036 | 410360 |
| 6 | Ֆինանսական ղեկավար սոց վճար | ամիս | 12 | 51500 | 618000 |
| 7 | Թարգմանիչ սոց վճար | ամիս | 11 | 28400 | 312400 |
| 8 | 3 Օժանդակ աշխատակիցներ /վարորդներ/ Սոց վճար | ամիս | 12 | 48000 | 576000 |
| | Ընդամենը | | | | 3850470 |

*3. 421400 հոդված Կապի ծառայություններ՝ 2 569,8 հազ. դրամ:*

Նախատեսվում է խորխերի նմուշների տեղափոխում վերազգային ռեֆերենս լաբորատորիա: Միավորի գինը մեկ փաթեթի տեղափոխման կազմում է 950 000 դրամ:Սույն փաթեթը իր մեջ ներառում է 165 հատ շտամ: Միավոր շտամի տեղափոխման նախահաշվային գինը կազմում է 5757,6 դրամ:

Նախատեսվում է նաև վճարել ԾՀԽ-ի 12 անդամների բջջային հեռախոսների խոսելավարձը 12 ամիս ամսեկան 11248 դրամի չափով յուրաքանչյուր հեռախոսի համար: Ընդամենը կկազմի 12*12*11248 =169765դրամ:

Ընդամենը սույն հոդվածի համար նախատեսվում է 950000+169765= 2 569,8 հազ. դրամ:

*4. 422100 Հոդված - Ներքին գործուղումներ ՝ 2 448,0 հազ.դրամ:*

Ծրագրով նախատեսվում է իրականացնել դաշտային այցելություններ ՀՀ հանրապետության տարածքում: Այցելությունը իրականացվելու է 2 մասնագետի կողմից: Նախատեսվում է տրամադրել 15000 դրամ գիշերավարձ և 2000 դրամ օրապահիկ: 2010

թվականին յուրաաքանչյուր մասնագետը 72 օր իրականացնելու է այցեր: Ընդամենը դաշտային այցելությունների կազմակերպման համար նախատեսվում է 2*72*17000=2448,0 հազ դրամ:

*5. 423400 հոդված` Տեղակատվական ծառայություններ` 5 811,0 հազ. դրամ:*

Նախատեսվում է քարոզչական նյութերի տպագրություն 1 խմբաքանակի գինը 5 810 950 դրամ: Խմբաքանկի մեջ ընդգրկված տպագրական նյութերի քանակական ցուցանիշները ներկայացվելու են ՀՀ առողջապահության նախարարության «Տուբերկուլոզի Ազգային Գրասենյակ» ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվարկը ներկայացվելու է 2010 թվականի 2-րդ եռամսյակում: Խմբաքանակի արժեքը համահունչ է նախադեպի հետ:

*6. 423500 հոդված` Կառավարչական ծառայություններ` 198 744,5 հազ. դրամ:*

01 Հունվար 2010թ.- 31 Դեկտեմբեր 2010թ. ժամանակահատվածում նախատեսվում է ձեռք բերել Աղյուսակ 3-ում բերված կառավարչական ծառայությունները:

Աղյուսակ 3 ՀՀ Դրամ

| N | Հաստիքներ | Չափի միավոր | Քանակ | Միավորի գին դրամ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | *Տեխնիկական աջակցություն լաբորատոր, ախտորոշիչ, հետազոտական, ԴԿ տուբերկուլոզի կլինիկական կառավարման, ինֆեկցիոն վերահսկման և բուժման կազմակերպման բնագավառներում | Միջոցառում | 3 | 7117403 | 21352210 |
| 2 | *Տեղային վերապատրաստման կազմակերպում այն անձնակազմի համար, որը կմասնակցի ԴԿ տուբերկուլոզով հիվանդների ամբուլատոր բուժմանը | Մասնակից | 60 | 267149 | 16028921 |
| 3 | «Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերության բազմադեղակայուն տուբերկուլոզի բուժման համար նախատեսված մասնաշենքի առաջին հարկի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն | հատ | 1 | 143000 | 143000 |
| 4 | «Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերության բազմադեղակայուն տուբերկուլոզի բուժման համար նախատեսված մասնաշենքի վթարային էլեկտրասնուցման համակարգի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն | հատ | 1 | 80000 | 80000 |
| 5 | *Տեխնիկական աջակցություն-խորհրդատվություն տեղային փորձագետի կողմից համճարագային վերահսկման ուղեցույցի լրամշակում թեմայով | Միջոցառում | 1 | 2249673 | 2249673 |
| 6 | **Ծրագրային հետազոտություն ԴԿՏ դեպքերի պատճառագիտության վերլուծության մասով | հետազոտություն | 1 | 14588517 | 14588517 |
| 7 | **Ծրագրային հետազոտություն կողմնակի ազդեցության մասով | հետազոտություն | 1 | 10248363 | 10248363 |
| 8 | **Խորխերի տեղափոխում հանրապետության ամբողջ պերիֆերիայից ազգային ռեֆերենս լաբորատորիա | ամիս | 9 | 1339014 | 12051124 |
| 9 | **Տեխինկական աջակցություն խորհրդատվություն սոցիալական աջակցության ներդրման իրականացման և վերահսկման վերաբերյալ | ամիս | 12 | 281209 | 3374510 |
| 10 | *Բուժման հետևողականության բարձրացման խորհրդատուների խումբային աշխատանքների կազմակերպում խորհրդատուների աշխատանքային խմբի միջոցով | եռամսյակ | 3 | 2927950 | 8783849 |
| 11 | *Հիվանդների կրթական և խորհրդատվական սեմինարների կազմակերպում | Միջոցառում | 12 | 33745 | 404941 |
| 12 | *ԴԿՏ հիվանդների սոցիալկան աջակցություն 1 | Հիվանդ | 120 | 538680 | 64641545 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 13 | *ԴԿՏ հիվանդների սոցիալկան աջակցություն 2 | հատ | 180 | 105716 | 19028860 |
| 14 | DOTծրագրի շրջանակներում բուժքույրների տնային այցելությունների կազմակերպում 1-ին փուլ | այցելություն | 5897 | 787 | 4643213 |
| 15 | DOTծրագրի շրջանակներում բուժքույրների տնային այցելությունների կազմակերպում 2-րդ փուլ | այցելություն | 5054 | 866 | 4377391 |
| 16 | DOTծրագրի շրջանակներում հիվանդների բուժհաստատություններ այցելության կազմակերպում 1-ին փուլ | այցելություն | 3931 | 787 | 3095213 |
| 17 | DOTծրագրի շրջանակներում հիվանդների բուժհաստատություններ այցելության կազմակերպում 2-րդ փուլ | այցելություն | 3370 | 866 | 2918838 |
| 18 | *Հիվանդների աջակցության կազմակերպման ծառայություններ | եռամսյակ | 4 | 2183589 | 8734356 |
| 19 | Աուդիտորական ծառայություն | միջոցառում | 1 | 2000000 | 2000000 |
| | Ընդամենը | | | | 198744526 |

*Միավորի գինը հիմնված է դոնոր կազմակերպության հետ նախապես համաձայնեցված բյուջեի ցուցանիշների վրա:

** Միավորի գները հիմնված են դոնոր կազմակերպությանը ներկայացված բյուջետային ցուցանիշների վրա:

*7. 423900 հոդված՝ Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝ 756,0 հազ. դրամ.;*

Նախատեսվում է 7000 դրամ միվորի գնով ամսեկան լիցքավորել կամ փոխանակել 9 թանաքաման: Ընդամեը տարվա համար կկազմի 9*12*7000=756.0 հազ. դրամ

*8. 426100 հոդված՝ Գրասենյակային նյութեր և հագուստ ՝4 817,7 հազ. դրամ.;*

Նախատեսվում է ձեռք բերել աղյուսակ 4-ում բերված գրասենյակային նյութերը և հագուստը:

Աղյուսակ 4 ՀՀ Դրամ

| N | Հաստիքներ | Չափի միավոր | Քանակ | Միավորի գին դրամ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Թուղթ | կգ | 4842 | 720 | 3486240 |
| 2 | Գրիչ | հատ | 1230 | 80 | 98400 |
| 3 | Գրիչ 1 | հատ | 62 | 80 | 4960 |
| 4 | Նոթատետր | հատ | 82 | 320 | 26240 |
| 5 | Մատիտ | հատ | 205 | 60 | 12300 |
| 6 | Ռետինե | հատ | 41 | 200 | 8200 |
| 7 | Նշումների թուղթ կպչուն | հատ | 206 | 270 | 55620 |
| 8 | էջաբաժանիչ | հատ | 123 | 600 | 73800 |
| 9 | Թղթապանակ | հատ | 123 | 800 | 98400 |
| 10 | Թղթապանակ - ֆայլ | հատ | 62 | 1850 | 114700 |
| 11 | Կարիչի ասեղ | հատ | 410 | 70 | 28700 |
| 12 | Թղթե գրատախտակ | հատ | 29 | 3200 | 92800 |
| 13 | Թղթադարակ | հատ | 20 | 4400 | 88000 |
| 14 | Կարիչ | հատ | 29 | 2900 | 84100 |
| 15 | Հաշվիչ մեքենա | հատ | 29 | 3200 | 92800 |
| 16 | Նշումների թուղթ կպչուն 1 | հատ | 41 | 1300 | 53300 |
| 17 | Սեղմակ | հատ | 1987 | 40 | 79440 |
| 18 | Սեղմակ 1 | հատ | 5000 | 15 | 75050 |
| 19 | Թղթապանակ 8 | հատ | 60 | 80 | 4800 |
| 20 | Լրակազմ 7 | հատ | 10 | 5500 | 55000 |
| 21 | Ընդգծիչ 1 | հատ | 48 | 230 | 11040 |
| 22 | Սկոչ 1 | հատ | 12 | 160 | 1920 |
| 23 | Գրասենյակային գիրք 5 | հատ | 6 | 550 | 3300 |
| 24 | Օրար 7 | հատ | 14 | 45 | 630 |
| 25 | Նոթատետր | հատ | 112 | 1500 | 168000 |
| | Ընդամենը | | | | 4817740 |

*9. 426600 հոդված՝ Առողջապահական և լաբորատոր նյութեր՝ 194 160,8 հազ. դրամ;*

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել Աղյուսակ 5-ում բերված առողջապահական և լաբորատոր նյութերը:

Աղյուսակ 5 ՀՀ Դրամ

| N | Հաստիքներ | Չափի միավոր | Քանակ | Միավորի գին դրամ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Բազմադեղակայուն տուբերկուլոզի ցանքսի պինդ միջավայրեր (Կուլտուրալ հետազոտությունների թեստեր) | հավաքածու | 1 | 17214284 | 17214284 |
| 2 | Հակաբիոտիկ կարբենիցիլին/դի-նատրիում/ | շիշ | 1 | 208000 | 208000 |
| 3 | Հակաբիոտիկ պոլիմիքսին | շիշ | 1 | 48000 | 48000 |
| 4 | Հակաբիոտիկ տրիմեթոպրիմ | շիշ | 1 | 20000 | 20000 |
| 5 | Հակասնկային ամֆոտերիցին | շիշ | 4 | 21000 | 84000 |
| 6 | Կրիոտուբ ստերիլ | կապոց | 2 | 32000 | 64000 |
| 7 | Արյունային ագարի հիմք | շիշ | 2 | 60000 | 120000 |
| 8 | Նիտրատ ռեդուկտազա իդենտիֆիկացիայի թեստ | սրվակ | 20 | 23000 | 460000 |
| 9 | Նիացինի որոշման համար իդենտիֆիկացիայի թեսթ | սրվակ | 20 | 193000 | 3860000 |
| 10 | Թիոֆեն կարբոքսիլաթթվի հիդրազիդ, | սրվակ | 1 | 21000 | 21000 |
| 11 | INH թեստ կոնտրոլ | տուփ | 5 | 7500 | 37500 |
| 12 | MGIT-960 սարքավորման համար դեղազգայունության թեստեր(Bactec թեստեր) | հավաքածու | 1 | 28163146 | 28163146 |
| 13 | MYCOPREP նմուշի նախապատրաստման՝ մարսման ախտազերծման համար հավաքածու | հավաքածու | 15 | 59000 | 885000 |
| 14 | MYCOPREP նմուշի նախապատրաստման՝ մարսման ախտազերծման համար հավաքածու 1 | հավաքածու | 32 | 35600 | 1139200 |
| 15 | Աճի հավելման հավաքածու | հավաքածու | 40 | 55500 | 2220000 |
| 16 | BBL փորձանոթ | հավաքածու | 42 | 209000 | 8778000 |
| 17 | SIRE հակաբիոտիկների հավաքածու | հավաքածու | 20 | 63500 | 1270000 |
| 18 | PZA ցուցիչ փորձանոթ | տուփ | 50 | 67600 | 3380000 |
| 19 | PZA հակաբիոտիկի հավաքածու | հավաքածու | 16 | 79000 | 1264000 |
| 20 | Կալիբրատոր հավաքածու | տուփ | 1 | 1014500 | 1014500 |
| 21 | Ստերիլ կաթոցիչ | փաթեթ | 15 | 9700 | 145500 |
| 22 | Ստերիլ կաթոցիչ 1 | փաթեթ | 15 | 9700 | 145500 |
| 23 | Ստերիլ կաթոցիչ 2 | փաթեթ | 30 | 22000 | 660000 |
| 24 | Պաստեր կաթոցիչ | փաթեթ | 4 | 44000 | 176000 |
| 25 | ՊՇՌ սարքավորման համար դեղազգայունության թեստեր (Ռապիդ թեստեր) | հավաքածու | 1 | 16629580 | 16629580 |
| 26 | Կուլտուրալ հետազոտությունների թեսթ անմիջական բուժման փուլում գտվող հիվանդների թեսթավորման համար | Հավաքածու | 1 | 3779450 | 3779450 |
| 27 | Բազմադեղակայուն տուբերկուլոզի բուժման 1-ին շարքի դեղազգայունության թեստեր (Կուլտուրալ հետազոտությունների թեստ ԴԿ հիվանդների թեստավորման համար) | Հավաքածու | 1 | 7693882 | 7693882 |
| 28 | Երկրորդ շարքի դեղերի դեղազգայությությաn թեստեր առանց առաջադիմության բուժվող ԴԿՏ հիվանդների | Հավաքածու | 1 | 15185294 | 15185294 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 29 | Լաբորատոր ծախսանյութեր բիոքիմիական, կլինիկական և լաբորատոր հետազոտությունների համար | Հավաքածու | 1 | 18347016 | 18347016 |
| 30 | Հակաբիոտիկ Դ-ցիկլոսերին | շիշ | 1 | 46000 | 46000 |
| 31 | Հակաբիոտիկ ամիկացին | շիշ | 1 | 144000 | 144000 |
| 32 | Հակաբիոտիկ կապրեոմիցին սուլֆատ | շիշ | 1 | 152500 | 152500 |
| 33 | Հակաբիոտիկ օֆլոքսացին | շիշ | 1 | 26000 | 26000 |
| 34 | Հակաբիոտիկ պարամինո սալիցիլաթթվի նատրիումական աղ | շիշ | 1 | 23000 | 23000 |
| 35 | Հակաբիոտիկ պրոթիոնամիդ | շիշ | 1 | 80000 | 80000 |
| 36 | Կողմնակի ազդեցության դեղեր | հավաքածու | 1 | 27063808 | 27063808 |
| 37 | Ալյումինի հիդրօքսիդ 400 մգ/Մագնեզիումի հիդրօքսիդ 400 | դեղահատ | 20000 | 33 | 660000 |
| 38 | Կվամատել 200 մգ | դեղահատ | 20000 | 12 | 242000 |
| 39 | Ֆլուկոնազոլ 100 մգ. | դեղահատ | 10000 | 176 | 1760000 |
| 40 | Ֆլուկոնազոլ 50 մգ. | դեղապատիճ | 10000 | 110 | 1100000 |
| 41 | Իբուբրուֆեն 400 մգ | դեղահատ | 40000 | 28 | 1100000 |
| 42 | Լինեքս | դեղապատիճ | 5200 | 76 | 393276 |
| 43 | Լոպերամիդ 2 մգ | դեղահատ | 14000 | 33 | 462000 |
| 44 | Մետոկլոպրամիդ հիդրոքլորիդ 10 մգ | դեղահատ | 20000 | 11 | 220000 |
| 45 | Մուլտիտաբս | դեղահատ | 10000 | 70 | 698500 |
| 46 | Նիստատին | դեղահատ | 2000 | 17 | 33000 |
| 47 | Օմեպրազոլ 20 մգ | դեղապատիճ | 20000 | 33 | 660000 |
| 48 | Օնդանսետրոն 8 մգ | դեղահատ | 5000 | 880 | 4400000 |
| 49 | Ռեգիդրոն 20գ/1 | փաթեթ | 2000 | 440 | 880000 |
| 50 | Պարացետամոլ 500 մգ | դեղահատ | 10000 | 7 | 66000 |
| 51 | Վիկասոլ 10մգ | դեղահատ | 400 | 11 | 4400 |
| 52 | Կալիումի քլորիդ 1գ | դեղահատ | 2000 | 7 | 14000 |
| 53 | Պրոմետազին հիդրոքլորիդ 25մգ | դեղահատ | 12000 | 55 | 660000 |
| 54 | Սալբուտամոլ 0.1 մգ | հատ | 100 | 1100 | 110000 |
| 55 | Սալբուտամոլ 4 մգ | դեղահատ | 4000 | 39 | 154000 |
| 56 | Կոտրիմոքսազոլ 400 մգ/ 80մլ | դեղահատ | 4000 | 33 | 132000 |
| 57 | Ֆուրոսիմիդ 40 մգ | դեղահատ | 4000 | 8 | 30800 |
| 58 | Մետրոնիդազոլ 500մգ | դեղահատ | 2000 | 20 | 39600 |
| 59 | Էուֆիլին 25մգ/մլ | սրվակ | 200 | 55 | 11000 |
| 60 | Ատրոպին 1մգ/մլ | սրվակ | 200 | 110 | 22000 |
| 61 | Կալցիումի գլյուկոնատ 100մլ/մգ | սրվակ | 200 | 96 | 19140 |
| 62 | Դեքսամեթազոն ֆոսֆատ 4մգ/մլ | սրվակ | 200 | 110 | 22000 |
| 63 | Դիկլոֆենակ նատրիում 25 մգ/մլ | սրվակ | 800 | 77 | 61600 |
| 64 | Գլյուկոզա 5% | պոլիէթիլենային փաթեթ | 200 | 396 | 79200 |
| 65 | Ռինգեր | պոլիէթիլենային փաթեթ | 400 | 396 | 158400 |
| 66 | Նատրիումի քլորիդ 0.9%-500 | պոլիէթիլենային փաթեթ | 1000 | 396 | 396000 |
| 67 | Ռեսպիրատորներ | հատ | 17448 | 928 | 16191744 |
| 68 | Ռեսպիրատորների ստուգիչ թեստեր | հատ | 1 | 350000 | 350000 |
| 69 | Ռեսպիրատորների ստուգիչ թեստեր 1 | հատ | 13 | 173000 | 2249000 |
| 70 | Ռեսպիրատորների ստուգիչ թեստի լուծույթ | սրվակ | 3 | 77667 | 233000 |
| | Ընդամենը | | | | 194160819 |

Աղյուսակ 5-ում բերված չափման միավորները, միավորի գները և քանակը համահունչ է դոնոր կազմակերպության կողմից հաստատված բյուջեի ցուցանիշների հետ:

*10. 426700 հոդված՝ Կենցաղային և հանրային սննդի նյութեր՝ 1 803,0 հազ. դրամ;*

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել Աղյուսակ 6-ում բերված կենցաղային և հանրային սննդի նյութերը:

Աղյուսակ 6 ՀՀ Դրամ

| N | Հաստիքներ | Չափի միավոր | Քանակ | Միավորի գին դրամ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Բնական հյութ դեղերի (մասնավորապես PAS) ընդունումից հետո խմելու համար | Լիտր | 2494 | 625 | 1559000 |
| 2 | Մարտկոց | հատ | 20 | 800 | 16000 |
| 3 | Չորացուցիչ սարք | հատ | 1 | 30315 | 30315 |
| 4 | Լամպ | հատ | 40 | 500 | 20000 |
| 5 | Թուղթ զուգարանի | հատ | 84 | 140 | 11760 |
| 6 | Հեղուկ օճառ կգ | կգ | 12 | 1450 | 17400 |
| 7 | Ամանների լվացման մածուկ | կգ | 6 | 585 | 3510 |
| 8 | Թեյնիկ էլեկտրական, | հատ | 2 | 6500 | 13000 |
| 9 | Զամբյուղներ պլաստմասայից | հատ | 12 | 600 | 7200 |
| 10 | Անձեռոցիկ թղթյա | հատ | 144 | 85 | 12240 |
| 11 | Անձեռոցիկ համակարգչի մոնիտորի համար | հատ | 54 | 1300 | 70200 |
| 12 | Երկարացման լար /5 մետր / | հատ | 6 | 3200 | 19200 |
| 13 | Երկարացման լար /3 մետր/ | հատ | 6 | 2700 | 16200 |
| 14 | Հեղուկ օճառի աման | հատ | 2 | 3500 | 7000 |
| Ընդամենը | | | | | 1803025 |

*11. 511300 հոդված՝ Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում՝ 338 681,0 հազ. դրամ.*

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Աղյուսակ 7-ում բերված կապիտալ վերանորոգման աշխատանքները:

Աղյուսակ 7 ՀՀ Դրամ

| N | Հաստիքներ | Չափի միավոր | Քանակ | Միավորի գին դրամ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | *DOTS կաբինետների վերանորոգում | հատ | 7 | 6209683 | 43467783 |
| 2 | *«Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր» ՓԲԸ-ի առաջին հարկում դեղակայուն տուբերկուլոզի 45 հոգու համար նախատեսված բաժանմունքի կապիտալ վերանորոգում | հատ | 1 | 295213244 | 295213244 |
| Ընդամենը | | | | | 338681027 |

*Միավորի գինը հիմնված է դոնոր կազմակերպության հետ նախապես համաձայնեցված բյուջեի ցուցանիշների վրա:

*12. 512200 հոդված՝ Վարչական սարքավորումներ՝ 646.8 հազ. դրամ.*

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել ռենտգեն մեքենայի ֆոտոէլեկտրոնային լուսանկարչական 10 պնակ (Ռենտգեն սարքավորման ժապավեններ): Միավոր պնակի գինը համաձայնեցված դոնոր կազմակերպության բյուջետային ցուցանիշների հետ և կազմում է 64678 դրամ: Ընդամենը սույն հոդվածով նախատեսվում է 646.8 հազ դրամ:

*13. 512900 հոդված՝ Այլ մեքենաներ և սարքավորումներ՝ 42 879,7 հազ. դրամ*

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել Աղյուսակ 8-ում բերված սարքավորումները և հոգալ պահմանման ծախսեր:

Աղյուսակ 8 ՀՀ Դրամ

| N | Հաստիքներ | Չափի միավոր | Քանակ | Միավորի գին դրամ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | *«Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր» ՓԲԸ-ի տրամադրված կահույքի և սարքավորումների հիմնանորոգման և պահպանման ծախսեր | տարի | 1 | 2948197 | 2948197 |
| 2 | Բազմադեղակայուն տուբերկուլոզի բաժանմունքի համար սարքեր և կահույք | Հավաքածու | 45 | 474287 | 21342902 |
| 3 | Ուլտրամանուշակագույն ճառագայթման մակարդակը չափող սարք | հատ | 14 | 368000 | 5152000 |
| 4 | Ուլտրամանուշակագույն ճառագայթման լամպի հենք /փակ տեսակի/ | հատ | 100 | 30000 | 3000000 |
| 5 | *MGIT սարքավորման պահպանում և հիմնանորոգում | տարի | 1 | 5061765 | 5061765 |
| 6 | *ՊՇՌ սարքավորման պահպանում և հիմնանորոգում | տարի | 1 | 1124837 | 1124837 |
| 7 | UV ուլտրամանուշակակգույն մանրեավոչնչացնող ճառագայթիչ լամպ ԴԿ բաժանմունքի համար | հատ | 250 | 17000 | 4250000 |
| Ընդամենը | | | | | 42879700 |

*Միավորի գինը հիմնված է դոնոր կազմակերպության հետ նախապես համաձայնեցված բյուջեի ցուցանիշների վրա:

*14. 513400 հոդված՝ Նախագծահետազոտական ծախսեր՝ 5 624,2 հազ. դրամ*

Նախատեսվում է բազմադեղակայուն տուբերկուլոզի բուժման անբարեհաջող ելքերով հիվանդների համար նախատեսված առանձնացված խնամքի կենտրոնի (հոսպիսի) նախագծում, որի նախահաշվային գինը կազմում է 5 624,2 հազ դրամ: Նածագծման գինը հիմնված է դոնոր կազմակերպության ներկայացված ցուցանիշների վրա:

ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահության էկոնոմիկայի
և հաշվապահական հաշվառման
վարչության պետ

Ա. Կարապետյան